



ՀԱՅԱՍՏԱՆԹԱՅՑ ԵԿԵԼԵՑԻՆ ԱՓՑՈՒՌՔԻ ՄԵԶ

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՑԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Իրանա-Հնդկաստանի թեմի Առաջնորդ Տ. Վահան Եպիսկոպոս Կոստանյանը 1948 թ. ամռանը հնդկահայ գաղութին այցելության ղեկավար էր մոտիկից ծանոթանալ մեր այդ հեռավոր ու հինավուրց գաղութներից մեկի եկեղեցական ու ազգային գործերի վիճակին, ինչպես և տեղում լուծել մեծահարուստ հնդկահայերի կողմից հնոս արված մի քանի կոտակներին խնդիրը:

Գերաշնորհ Տ. Վահան Եպիսկոպոսը, իր երկար ամիսներ տևող այցելության ընթացքում, հնարավորություն ունեցավ ոչ միայն մանրամասն ծանոթանալու մեր երբեմնի հայաշատ ու փառավոր անցյալ ունեցող հնդկահայ գաղութի ներկա անմխիթար վիճակի հետ, այլ և իր ներկայությամբ ազգային նոր շունչ հաղորդելու, կենդանություն մտցնելու բախտի կամքին թողնված, մայր Հայրենիքից կտրված մեր այդ հեռավոր գաղութում: Այս այցելությունը ակնառու կերպով ցույց է տալիս, թե որքան մեծ կարևորություն է ներկայացնում մեր հեռավոր գաղութների համար կենդանի կապը, անմիջական շփումը, նրանց մայր Հայրենիքի հետ կապելու, օտարացումը, ձուլումը կանխելու, գաղութում ազգային, հայրենասիրական ոգի մտցնելու, տեղական ազգային հաստատությունների ու կազմակերպությունների աշխատանքը նոր հունի մեջ դնելու, ազգային հասարակական գործիչներին խրախուսելու, քաջալերելու, նրանց գործունեությանը նոր թափ հաղորդելու տեսակետից:

Թեմի Առաջնորդ Տ. Վահան Եպիսկոպոսը, լրացի եկեղեցիների բնակիչ խոսած իր

սիրտի Քարոզներից, մի շարք հանդեսներ կազմակերպելով կարողացել է գաղութահայ ժողովրդի մեջ սեր արծարծել դեպի իր հայրենիք Սովետական Հայաստանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, դեպի հայրենի մշակույթը, մայրենի լեզուն: Այս մասին են վկայում թե՛ Մայր Աթոռում, Վեհափառ Հայրապետի անունով, ստացված զեկուցագրերը և թե՛ գաղութահայ մամուլում լույս տեսած նյութերը:

Մոայլ խոհերով է պաշարված մարդ, երբ ընթերցում է Տ. Վահան Եպիսկոպոսի, իր այցելության սկզբում գրած, զեկուցագրերը:

«Ինչպես Բոմբեյում, այնպես էլ Կալկաթայում հայության երեք քառորդը հայերեն չի խոսում ու չի հասկանում, մանավանդ երիտասարդ սերունդը: Նույնիսկ մի շարք 55—57 տարեկան հայեր չգիտեն հայերեն 2—3 խոսք անգամ:

Երբ ես Կալկաթայից 70—80 կիլոմետր հեռավորության վրա Չինսուրա քաղաքի հայոց Ս. Հովհաննես զեղեցկատեսիլ եկեղեցին այցելեցի, արցունքն ինձ խեղդում էր, խոսել չէի կարողանում, որովհետև տասնյակ հազարավոր շիրիմները վկա էին մեր անցյալ փառավոր օրերի, իսկ այսօր մեր ձուլմանը, մեր անխուսափելի կորսությանը: Չինսուրայում, ուր տասնյակ հազարավոր հայեր են ապրել, այսօր միայն եկեղեցու պահպան մի կին է ապրում, իր 15 տարեկան խելագար տղայի հետ...»:

Ապա անդրադառնալով դպրոցական գործին Սրբազան Հայրը գրում է.

«Դպրոցական գործերը վատթարագույն վիճակումն են: Միայն Կալկաթայում կան օրիորդաց և տղայոց դպրոցներ, ընդ որում

տղայոցը կոչվում է Հայոց Մարդասիրական ճեմարան: Ներկա եղա դասերին և տխուր խոհերի տակ թողեցի հիշյալ դպրոցները: Դպրոցներում աղոթքն անգամ անգլերեն էր. 4-րդ դասարանից մինչև 10-րդ դասարանը կրոնն, անգլերեն լեզվով, ավանդում է մի խառնածին աղջիկ:

Սակախ մարդու հոգին հրճվանքով է լինում, երբ տեսնում է թե ինչպես այդ մոռյալ իրականության մեջ առկայծել են սկսում հույսի նշույները, թե ինչպես օտարացած, խորթացած գաղութը ազգային զարթոնքի, ինքնագիտակցության ակրնհայտ նշաններ է ցույց տալիս, թե ինչպես հայրենասիրության հուրը բորբոքվել է սկսում նրանց սրտերում և թե ինչպիսի մեծ խանդավառություն է նրանք արձագանքում ազգապահպանման ու հայրենասիրական կոչերին: Քայլ առ քայլ հետևելով, տեսնում ես, թե ինչպես ամիսների ընթացքում նույնիսկ փոխվել է սկսում ազգային կյանքը, ուշադրության են արժանանում ազգային նվիրական ավանդությունները, աճում է ընդհանուր հետաքրքրությունը Մայր Աթոռի ու Հայրենիքի հանդեպ, մեծ շուքով տոնվել են սկսում ազգային ու եկեղեցական տոները, նոր թափ է ստանում դպրոցական գործը, հնչել է սկսում մայրենի լեզուն, աշխուժանում է հասարակական կազմակերպությունների գործունեությունը: Ահա ինչ է գրում իր զեկուցագրում թեմի Առաջնորդ Տ. Վահան Եպիսկոպոսը.

«Կարկաթա հասնելուս սկսեմ ձեռք դարկեցի

կանոնավորելու եկեղեցական ու դպրոցական գործերը, ինչպես և ազգային շունչ մտցնելու ժողովրդի մեջ, որը բոլորովին օտարացել էր: Կալկաթայում կազմակերպեցի Հայ Կանանց Բարեգործական Ընկերություն և եկեղեցասեր Կանանց Վարչություն, որոնք արդեն գործի են անցել:

Չնայած շոգի պատճառով չափազանց



Տ. Վահան Եպիսկոպոս Կոստանյան

նեղվեցի, նույնիսկ հիվանդացա, սակայն ուշին, որովհետև իմ գալուստ եկեղեցին, դպրոցներն ու ժողովուրդը իրական կործանումից փրկվեցին: Ժողովուրդը բուրեցի և հայրենի դասեր վերցնել, հետաքրքրվում է եկեղեցիով, հանդեսներով և այլն: Երկու անգամ պատարագել ու քարոզել եմ էջմիածնի ու Հայոց Հայրապետության նշանակության ու դերի մասին: Հանդեսներ եմ կազմակերպել էջմիածնի տոնի, Ձերդ Սրբության օծման տարեդարձի ու Անվանակոչության, Թարգմանչաց տոնի, Սովետական Հայաստանի 28-րդ տարեդարձի առթիվ և այլն: Ձերդ Վե-

հափառության Անվանակոչության նվիրված հանդեսը մեծ խանդավառություն առաջ բերեց: Ձեր կյանքի ու գործունեության մասին խոսեցի մոտ մեկ ժամ: Պատրաստն էի տրվել հոգևոր համերգ՝ Կրթաշտաբմբի և երգչախմբի մասնակցությամբ: Հանդեսի վերջում երկսեռ խումբ բազմությունը ոգևորված գոչում էր «Կեցցե՛ մեր Վեհափառը, կեցցե՛ Գևորգ Զ Կաթողիկոսը, երկար կյանք մեր

վհհափառին, թող անսասան մնա Ս. Էջմիածինը և երկար ապրի նրա Գահակայքը:

Հայրենասիրության, ազգային ոգու արծաթամանը մեծ չափով նպաստեց նաև երկկույթների կազմակերպումը: Թեմական Առաջնորդի ներկայությամբ ոգեշնչված հրեղ-

կահայ գաղութը մի շարք երեկույթներ է կազմակերպել: Բերում ենք դրանցից երկուսի նկարագրությունը: «Պայքար» թերթը, 1948 թ. հոկտեմբեր 24 համարում զետեղել է հետևյալ խորագիրը կրող թղթակցությունը.—

ԿԱԿԱԹԱՅԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԿՅԱՆՔԵՆ

Թեհրանի «Վերածնունդ»-ի 10 սեպտ. թիվին կթաղենք*).

Օգոստոս 14-ի, երեկոյան ժամը 5.30-ին, Մարդասիրական ճեմարանի, Դավթյան օրիորդաց դպրոցի և օտար դպրոցներ հաճախող հայ ուսանող-ուսանողուհիներու կողմից և ուսուցչական կազմի մասնակցությամբ, Մարդասիրական ճեմարանի ճաշասրահին մեջ թեյի և դպրոցական երեկույթի էր հրավիրված Իրանա-Հնդկաստանի թեմի Առաջնորդ Գեր. Վահան Նպիսկոպոս Կոստանյանը, եկեղեցական ու դպրոցական: Վարչական կազմի անդամներու և անոնց հարգելի տիկիներու հետ միասին:

Սրբազան Հոր սրահ մտնելուն պես ճեմարանի նվազախումբը սկսավ նվագել «Ծաղկիր ազատ իմ հայրենիք»-ը՝ դպրոցներու երգչախմբի ընկերակցությամբ:

Անմիջապես հետո, աշակերտության կողմից պ. Պետրոսյանը, տպավորիչ և զգայուն շնչով, կարդաց հետևյալ ուղերձը.—

Գերապատիվ Սրբազան, Վահան Նպիսկոպոս Կոստանյան, Իրանա-Հնդկաստանի թեմի Առաջնորդ և Պատվիրակ Վհհափառ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ի Կալկաթա:

Սրբազան Հայր, մեծագույն երջանկություն է Հայոց Մարդասիրական ճեմարանի ուսանողներու և քույր Դավթյան աղջկանց վարժարանի աշակերտուհիներու և տեղվույս անկողնական վարժարաններու հայ ուսանողներու համար, ընդունել և հյուրասիրել Ձեր Ամենապատվությունը, այս պատմական հաստատության դահլիճին մեջ:

Ձեր Գերապատվության ներկայությունը բաղաբխ հայ ուսանող-ուսանողուհիներուն համար եղավ ներշնչման մի մեծ աղբյուր, հոգևոր և մտային սնունդի նորոգմամբ, իսկ մեր կարոտյալ հայրենիքի վերելքը՝ նորանոր նվաճումներով, գիտական, շինարարական, գրական և արվեստի ասպարեզներու մեջ, մեզ կմղե հպարտության: Մեր եղբայրներու և քույրերու հսկայաբայլ հառաջդիմություն-

ները հարազատ մեր Սովետական մայր երկրին մեջ, որքան որ մեզ կլեցնե հրճվանքով, նույնքան ալ մենք ցավ կզգանք, որ զրկված ենք Մայր Հայրենիքի հայության հետ շինելու համար: Մեր հոգիներուն մեջ տեղ գրտած երազային Հայաստանի մեջ մենք ալ կհափաքինք կարծր իրականությունը շոշափել: Թող մեր ձեռքերն ալ կոշտանան Հայաստանի քարերը տաշելով, Հայաստանի վերելքի և աշխատանքի վսեմ պարծանքով:

Սրբազան Հայր. կխնդրենք մեր անկեղծ զգացումներուն թարգմանը լինեք մեր հարազատ Հայրենիքի եղբայրներուն և քույրերուն, աշխատանքի մեր հերոսներուն: Մենք կնախանձինք անոնց: Մեր ջերմագին ուղերձները Հայաստանի Կառավարության, մտավորականներուն, ուսանող-ուսանողուհիներուն և հայ ժողովրդին:

Սրբազան Հայր, կխնդրենք որ մեր խոնարհագույն հարգանքները հայտնեք Ամենայն Հայոց Վհհափառ Հայրապետին— Ս. Տ. Գեվորգ Զ շինարար Կաթողիկոսին, մաղթելով իրեն երկար և բարեբաստիկ կյանք. նույնպես և Ձերդ Գերապատվության երկար և բարեբաստիկ կյանք, որ ընդմիջող խնամեք հայ Իրանա-Հնդկաստանի թեմի աշակերտները, իրենց հոգևոր և նյութական դրոժներուն մեջ:

Ձերդ Գերապատվության աջը համբուրելով կհամբուրենք նաև Վհհափառ Հայրապետի աջը՝ խոնարհագույն հարգանքներով:

Ուղերձն հետո տեղի ունեցավ զեղարվեստական ճոխ բաժին: Օրիորդաց խումբը երգեց «Ծաղկիրներ», «Մարի աղջիկ», Ռ. Միհրանյան՝ «Վարմիր Բանակին»: Արտասանեցին «Է՛յ ջան հայրենիք»— Գ. Միհրանյան, «Ազատության զորավարին»— Ս. Գրիգորյան: Ներկա եղողները միջնարարին հյուրասիրվեցան թեյով, կարկանդակով և անուշեղենով:

Երկրորդ մասին մեջ օրիորդ Ա. Նաջարյան դաշնամուրի վրա նվագեց «Վիլիկիա» Բ. Սանգուլյան արտասանեց Ա. Իսահակյանի «Հաջող ելույթներ ունեցան փոքրիկները: Օրիորդաց խումբը պարեց «Է՛յ ջան Երևան»:

Այս բոլորը ողջունվեցան ծափերով և թողուցին մեծ տպավորություն, ստեղծելով հայրենաբաղձ խանդավառ մթնոլորտ մը:

*) «Վերածնունդ» թերթի նշված համարը ձեռքի տակ չունենալով, երեկույթի նկարագրությունը բերում ենք ըստ «Պայքար» թերթում զետեղված քաղվածքի:

Ի վերջո Սրբազան Հայրը, շափազանց գոհ տրամադրությամբ, սկսավ խոսիլ Նախ շնորհակալություն հայտնեց դպրոցներու հայ դասատուներուն՝ պ. Լ. Քալեմարյանին, Արժանապատիվ Տեր Ա. Միրզայանին և հարգելի տիկ. Մ. Հովհաննեսյանին, որոնք հանդեսը հաջող կազմակերպելու համար ունեցանք ու աշխատանք չէին խնայել:

«Այսօր, — ըսավ նա, — ինձ շատ բախտավոր կզգամ, երբ կտեսնեմ, որ իմ ներկայությամբ այստեղի հայ կյանքը շարժվիլ սկսած է: Նոր թափ, նոր հետաքրքրություն, նոր սերարթնացած է ձեր մեջ, դեպի հայ լեզուն, հայ ոգին ու գրականությունը: Չափազանց ուրախ եմ այդ բանին համար:

Դպրոցի այն աշակերտներն ոմանք, որոնք հայերեն մի քանի բառ անգամ խոսել չգիտեին, հաղվիլ երկու ամիս առաջ, օրինակ մեր փոքրիկ Միքայելը, այսօր երգեցիկ խումբի հետ հայերեն երգեր կերգեն:

Ամոթ է, կարելի չէ մեր մատաղ սերունդը զրկել մայրենի լեզվի դաստիարակությունից: Մանավանդ, որ դպրոցներն այստեղ գլխավորապես հիմնված են ազգային ոգիի պահպանման միակ նպատակին համար:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՒՅԹ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՄԵԶ

Օգոստոս 21-ին, Կալկաթայի հայությունը մեծ շուքով տոնած է Ս. Աթոռի Միսեն էջմիածին փոխադրության 500-ամյակը: Հանդեսը կազմակերպված է տեղվույն Գեղարվեստասիրաց Միության կողմից, հովանավորությամբ Իրանա-Հնդկաստանի թեմի Առաջնորդ Տ. Վահան Եպիսկոպոս Կոստանյանի:

Հանդեսը կըացվի «էջմիածինն ի հորե» շարականով, որմե հետո խոսք կառնե Գեղարվեստասիրաց Միության նախագահ Զ. Հանսնյան, որ ի միջի այլոց կըսե. — «Հաղ-

թեմի Առաջնորդ Տ. Վահան Եպիսկոպոսը Հնդկաստանում ոչ միայն հետաքրքրվել է եկեղեցական, դպրոցական, հասարակական գործերով, այլ և արձագանքել է աշխարհիկ-րեւելծներին, որոնք, թվում է թե, ոչ մի աղքատություն էլ չունենին նրա առաքելության հետ: Մեկայն այդ բանն արեւ է նա գիտակցաբար, աշխատելով ամեն մի երեւելծ օգտագործած լինել գաղութահայ ժողովրդի ազգային ոգին բարձրացնելու նպատակով:

Մի այդպիսի երեւելծի մասին է խոսում Զ. Հանսնյանի «Րգբի մրցում Կալկաթայում» խորագիրը կրող թղթակցությունը, տպագրված «Վերածնունդ» թերթի 1948 թ. սեպտեմբեր 23-ի համարում, որ բերում ենք ստորև. —

Այստեղ, ցավ ի սիրտ նկատած եմ, որ շատ քիչ ժամանակ տրված է հայերենի, հայոց գրականության, հայոց պատմության համար: Ինչպես կարելի է, այդպիսի թեթև աչքով վերաբերվիլ վերահիշյալ առարկաների հետ: Պետք է ուրիշ ավելորդ դասերու ժամերը կրճատել՝ հայերենը շատացնելու համար: Օրական մեկ ժամը երբեք բավական չէ:

Հայ դասատուներու թիվը ևս շատ քիչ է, երբ ուսուցիչներով կարելի չէ հայերենը ուսուցիչ հիմքերի վրա դնել, եթե այստեղ չկան ուսուցիչ-ուսուցչուհիներ, ուրիշ տեղեկ պետք է հրավիրել:

Երկարորեն, գեղեցիկ ու տպավորիչ կերպով հայ լեզվի ու գրականության պատմության մասին խոսելից հետո, Սրբազան Հայրը օրհնեց աշակերտությունը և ներկա եղող հանդիսականները և պահպանելով վերջացուց իր ճառը, ծափերու ոլորտի տակ:

Իսկ «Եպիսկոպոս» թերթի — 1948 թ. հոկտեմբեր 6-ի համարում, զետեղված է հետևյալ խորագիրը կրող թղթակցությունը, ուր տրվում է մի այլ երեւելծի նկարագրությունը. —

Թական է այն ժողովուրդը միայն, որ ունի հոգիի թուլք և ստեղծագործ գործություն: Անարժան է այն հայը, որ կուրանա մեր նախահայրերու թողած այն հողամասը և այն հողեշունչ մշակույթը, որ ծաղկեր է ու կրծաղկի այսօր:

Մեջընդմեջ կըլլան երգ, նվագ և արտասանություններ. «Հայաստան», «Քելե, քելե», «Հայոց լեզվին», «Իրիկիւր» և ուրիշներ:

Հանդեսը կփակվի Հայաստանի Պետական Հիմնով:

Կալկաթայի Րգբի խաղի նախաձեռնիչ շրջանի մրցումն տեղի ունեցավ սեպտեմբեր 1-ի երեկոյան ժամը 4.45-ին, անգլիական մի խմբի և մեր մարզական ակումբի տղաների միջև:

Ժամանակից առաջ տեղ էր գրավել հասարակությունը ու անհամբեր սպասում էր խաղի սկսվելուն:

Հանկարծ տեսանք ժողովրդի ուշադրությունը լուռ, կենտրոնանում է մի կետի վրա: Նայեցինք այդ ուղղությամբ և ինչ հաճելի զարմանք, Իրանա-Հնդկաստանի թեմական Առաջնորդ Գերապատիվ Վահան Եպիսկոպոս Կոստանյանը, մի խումբ հայերով շրջապատված, խորհրդավոր, պատկառազու, վեհա-

պանծ, դանդաղորեն մուտք էր գործում Կալկասայի անգլիական ակումբի խաղավայրը:

Դեռ նոր էր տեղ գրավել Սրբազան Հայրը, երբ հնչում է սուլիչը և հայտարարվում խաղը սկսված:

Չնայած հակառակորդ կողմի ուժեղությունը և խաղի օրենքներն ու նրբությունները յուրացրած լինելուն, մեր տղաները Սրբազան Հոր ներկայությունից ոգևորված, իրենց լավագույն ջանքը և ուժը երևան բերին հակառակորդ խմբին հաղթելու համար:

Խաղը սկսվելուն պես մեր տղաները անցան նրանց սահմանը և կատաղի պայքարը սկսվեց հակառակ կողմի վրա:

Սրբազան Հայրը խորը հետաքրքրությամբ հետևում էր խաղին, ասելով. «Սա խաղ չի, այլ պատերազմ է»: Երբ տեսնում էր, որ մեր տղաները գետին էին գլորում իրենցից շատ մեծ ու երկարահասակ ընդդիմադիրներին, հրճվանքով լցվում էր:

Խաղի առաջին շրջանն անարդյունք անցավ երկու կողմերի համար:

Երկրորդ շրջանում, հանկարծ մեր մարզիկները միացած ուժերով, ավիզային հարձակումով առաջացան և պարտության մատնեցին ընդդիմադիր խմբին, մեծ ուրախություն պատճառելով հայ հանդիսականներին:

Այս հաղթանակով մեր խումբը ձեռք բերեց վերջին մրցման մասնակցելու իրավունքը, որ տեղի պիտի ունենա սեպտեմբեր 4-ին, նույն դաշտում:

Սրբազան Հայրը գոհ ու բարձր տրամադրությամբ հեռացավ խաղադաշտից: Իր ներկայության պատուին էր այդ հաղթանակը:

Վերածնունդ-ի սեպտեմբեր 28-ի համարում տպագրված է Զ. Հանսոնյանի, սույն թղթակցության շարունակությունը, որ բերում ենք ստորև. —

Սեպտեմբերի չորսին, որոշված ժամին, տեղի ունեցավ Բգբի վերջին շրջանի մրցումը ակադեմիկոսների խաղը բազմության առաջ:

Կալկասայի հայ մարզական ակումբի Բգբու խումբը հաղթելով սկոտական Բգբի խմբին, ակադեմիկոսների բաժանի գրավման պատվին արժանացավ, հայ և օտար հանդիսականների որոտազին ծափերի տակ:

Խաղին ներկա էր գրեթե Կալկասայի ամբողջ հայ գաղութը իր քահանաներով:

Իրանա-Հնդկաստանի թեմի Առաջնորդ Գեորգյատիվ Վահան Եպիսկոպոս Կոստանյանը, քիչ անհանգիստ լինելու պատճառով, չկարողացավ ներկա լինել խաղին, բայց ազդարարել էր իրեն անմիջապես իմաց տալ, երբ տղաները կհաղթեն:

Հաղթության լուրը լսելուն պես ինքնաշարժով իսկույն գալիս է ակումբը, որը ծայրի ծայր լցված էր ոգևորված հայ հասարակությամբ:

Ակումբ մտնելուն պես, Սրբազան Հայրը, ազդված տիրող խանդավառ մթնոլորտից, անմիջապես սկսեց խոսել. —

— Այսօր ուրախության ու ցնծության օր է մեզ համար, — ասաց նա, — չափազանց հպարտ ու երջանիկ եմ տղաների այսօրվա տարած հաղթանակի համար: Սա ինքնին մեծ բան է թե՛ մարզական միության և թե՛ Կալկասայի գաղութի համար: Ինչպես հետաքրքրվել եմ, այստեղ Բգբի խաղադաշտի մեր տղաների թիվը երեսնից չի անցնում և այսպիսի փոքրաթիվ մարզիկներից կազմված մեր խումբը կարողացել է մրցումի դուրս գալ եվրոպական նշանավոր ակումբի ավելի բան չորս հարյուր անդամներից ընտրված, խաղի տեխնիկային լավ ծանոթ ու վարժ կազմված զորավոր խմբի դեմ և պարտություն մատնել. դա հպարտանքի և գովասանքի արժանի դեպք է մեզ համար: Մեր ցեղային մարտական ոգու, կարողության, տոկունության, եռանդի ցուցադրման մի գեղեցիկ դրվագ է:

Ապա սպորտի մասին երկար խոսելուց հետո Սրբազան Հայրը, իր խոսքը խաղին մասնակցող տղաներին ուղղելով ասաց. —

— Այսօր ձեր հաղթանակով հաստատեցիք, որ դուք Մեծ Տիգրանի, Տրդատի, մեր հերոս նախահայրերի ու զորավար Բաղդամյանի արժանավոր հալոնակիցներն եք: Միևնույն կտրիճների արյունն ու ոգին է իշխում ձեր մեջ:

Կեցցեք դուք և ձեզ ծնող հայ Մայրերը:

Խլացուցիչ ծափերի որոտ առաջացրին Սրբազան Հոր խոսքերը:

Ակումբի նախագահ պ. Մակ Զոհնը (Մեկըրտիչ Հովհաննիսյանը) մի քանի խոսքով իր խնդակցությունը հայտնեց տղաներին և ասաց. «Հուսով եմ, որ ապագայում ձեր հաղթանակներով շահած ուրիշ բաժանիք տեսնելու բախտն ինքն ունենալու այս ակումբում»:

Բգբի խմբի ղեկավար Ս. Սուքիասյանը իրենց շահած այդ օրվա բաժանիկը շամպայնով լցնելուց հետո մոտեցավ Սրբազան Հորը, որը իր հերթին օրհնեց բաժանիկի պարունակությունը, քիչ խմեց և պատվիրեց ներկա եղողներին իր օրինակին հետևել, օրից հետո Սրբազան Հայրը կրկին խոսեց, մասնավոր շնորհակալություն, եռանդ ու լիակատար հաջողություն մաղթելով ակումբի հիմնադիր

և ղեկավար մարմինն: Կրկին խրախուսեց մարզիկներին, հորդորեց ընկերական ու եղբայրական սեր, հարգանք, ղիջող ոգի ունենալ իրար հանդեպ և եղբայրական հետևյալ խոսքերով. «Աշխատեց՛ք միշտ հայ անունն ու պատիվը բարձր ու մաքուր պահել ձեր և օտարների առաջ»:

Օրհնեց ներկա եղողներին և գոհունակությամբ, իր փառահեղ միությունը շոյելով հեռացավ ակումբից մի խումբ հայրենակիցների հետ:

«Վերածնունդ»-ը գետեղել է նաև խաղի մի տեսարանի լուսանկարը, հայտնելով, որ այդ լուսանկարը տպագրվել է Կալկաթայի մեծ օրաթերթի «Սթեյթսմեն»-ի սեպտեմբեր 5-ի համարում և նրա տակը գրված է եղել «Հայերը առաջին անգամվա համար շահեցին Կալկաթայի արծաթ բաժակը» ու թված է եղել հաղթանակ շահած հայկական խմբի անդամների անունները:

Հնդկական կառավարության ներկայացուցիչների ուշադրությունը գաղութահայության վրա հրավիրելու նպատակով Տ. Վահան Եպիսկոպոս Կոստանյանը այցելել է պետական ակադեմիայի գործիչներին: Այս մասին

նա հետևյալն է կրում Վեհափառ Հայրապետին:

«Գիշերում, Բոմբեյում և Կալկաթայում այցելիցի հնդկական կառավարության պրեզիդենտին, վարչապետին և հիշյալ քաղաքների գեներալ-նահանգապետներին: Բոլորին Ձերդ Սրբության օրհնություններն ու ողջունները հաղորդեցի: Գոհ մնացին»:

Թե Իրանա-Հնդկաստանի թեմի Առաջնորդ Տ. Վահան Եպիսկոպոսի այցելությունը ինչպիսի մեծ խանդավառություն է առաջացրել հնդկահայ գաղութում, այդ երևում է այն դիմումից, որով հնդկահայերը խնդրում են նրան մի քանի ամսով ևս հետաձգել իր վերադարձը: Ահա ինչ է գրում այս մասին Տ. Վահան Եպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին հասցեագրած իր նոյեմբեր 19 թվականի ղեկուցագրում. —

«Բազմաթիվ քարոզներովս ու ճառերովս կարողացա ժողովրդին արթնացնել: Ժողովուրդը խանդավառվեց և հասկացավ, որ ես սիրում եմ իրեն ու հարգում, այլ և վերականգնում ազգային հաստատության մեջ կարգ ու կանոն, ուստի և 180 մարդու ստորագրությամբ ստացա հետևյալ դիմումը. —

ԳԵՐԱՊԱՍԻՎ Տ. ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴ ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

Սրբազան Հայր, նկատի ունենալով այն մեծ խանդավառությունը, որ Ձեր ներկայությամբ ստեղծել եք գաղութում այս կարճ ժամանակվա մեջ, հայ համայնքի մեծամասնությունը եկել է այն եղբայրացության, որ գաղութի համար չափազանց օգտակար պիտի

լինի, եթե Դուք մի քանի ամիսներ ևս հետաձգեք Ձեր վերադարձը և մնաք մեզ մոտ: Ներքո ստորագրող անհատներս խանարհաբար խնդրում ենք Ձեզանից նկատի առնք Ձեր խնդրագիրը և հետաձգեք Ձեր վերադարձը:

Համբուրելով Ձեր աջը մնամբ խոնարհ որդիք

(ստորագրություններ)

Թեմի Առաջնորդի այցելությունը հնդկահայ գաղութում ոչ միայն խանդավառություն, այլ և մեծ հետաքրքրություն է առաջ բերել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու նրա Հոգևոր ճեմարանի նկատմամբ: Այդ հետաքրքրությունը արտահայտվում է նրանով, որ հնդկահայերը սկսել են հոգատարություն ցուցաբերել Մայր Աթոռի ու Հոգևոր ճեմարանի կարիքների հանդեպ: Տ. Վահան Եպիսկոպոսը, իր 1948 թ. նոյեմբեր 19 թվականի ղեկուցագրում, գրում է. —

«Մի ազնիվ հայ, պ. Ղազար Մկրտչյանը, որը մի եպիսկոպոսական զգեստ է կրել տվել, ցանկացավ Ավագ Սեղանի համար մի ձեռագործ վարագույր պատրաստել տալ,

ուստի և խնդրեց Սեղանի վարագույրի չափը, այն է՝ բարձրությունը և լայնությունը, որ խնդրում եմ բարեհաճեք տնօրինել, անմիջապես ինձ հայտնելու: Այլ և խնդրում եմ, որպեսզի ինձ հայտնվի, թե Ավագ Սեղանը, որի վրա պատարագ է մատուցվում, քանի՞ աստիճան ունի և այդ աստիճանները ի՞նչ բարձրություն ու երկարություն ունեն: Ինձ թվում է, թե ցանկանում է կամ արծաթապատել տալ և կամ էլ ասեղնագործ սրբուհու ծածկել այն: Միաժամանակ խնդրում եմ, որպեսզի ինձ հայտնվի այն սեղանի, որի վրա սկիհ է դրվում, ճակատի բարձրությունը և երկարությունը, հաշվելով բեմի վրայից մինչև առաջին աստիճանի սկիզբը»:

Այնուհետև անդրադառնալով Հոգևոր ճեմարանի խնդրին, Տ. Վահան Եպիսկոպոսը շարունակում է.—

Քրիստոսի Եկեղեցական Վարչությունը հանձն առավ տնայտեսների 1-ից ճեմարանում մի սան պահել, Կալկաթան՝ 2 և պ. Մարտիրոս Մարտինը՝ 1 սան:

Ուղարկում եմ կալկաթաբնակ ջուղայեցի

պ. Մարտիրոս Մարտինի դիմումը, Սրբազանությունդ անունով, որով հանձն է առնում Հոգևոր ճեմարանում մի սան պահել իր հաշվին: Խնդրում եմ օրհնության կոնդակ ուղարկել նրա անունով:»

Ստորև բերում ենք պ. Մարտիրոս Մարտինի դիմումը.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՍՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Ի Վաղարշապատ

Վեհափառ Սրբազնագույն Հայրապետ,

Կալկաթայի հայոց եկեղեցում լսելով Իրանա-Հնդկաստանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Վահան Եպիսկոպոս Կոստանյանի քարոզը՝ էջմիածնի Հոգևոր ճեմարանի վերաբացման, ճեմարանի նպատակի, այն է թեմերին կրթված հայ քահանաներ տալու մասին, որոշեցի ճեմարանում իմ հաշվով մի սան պահել, որի մասին հայտնեցի Տ. Վահան Եպիսկոպոսին ու նրա խորհրդով այսու որդիական խոնարհությամբ դիմելով Սրբությունդ, հայտնում եմ, որ 1948 թ. սեպտեմբերից որդեգրում եմ մի սան, մինչև նրա, իմ որդեգրի, ճեմարանի լրիվ դասընթացի

ավարտելը 1948—49 ուս. տարու ծախքը՝ 2.000 ոտփին հանձնում եմ Կալկաթայի հայոց եկեղեցապաններին՝ Սրբությունդ առաքելու համար:

Խոնարհաբար խնդրում եմ Ձեր կարգադրությամբ, որպեսզի ինձ ուղարկվի իմ սանի կենսապահպանը. և լուսանկարը. միաժամանակ խնդրում եմ պատվիրել տալ նրան, որ ինձ հետ գրավոր կապ պահպանի:

Հայցելով Վեհափառությանդ օրհնությունը և համբուրելով Ձեր Ս. Աջը մնամ Աստուածաբնտիր Ս. Հայրապետիդ խոնարհ որդի

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐՏԻՆ

20-ին նոյեմբերի 1948 թ.

Կալկաթա

